



Ս. ՍԱՐԳԻՍ ԶՕՐԱՎԱՐ

Ամեն տարի Հայաստանեաց Առաքելական Ս. Եկեղեցին կը յիշատակէ Ս. Սարգիս զօրավարին տօնը:

Ս. Սարգիս զօրավար հայոց ամենէն սիրուած սուրբերէն է:

Ըստ աւանդութեան, Ս. Սարգիս Բիւզանդիոնի Մեծն Կոստանդինոս կայսեր կողմէ կը նշանակուի սպարապետ՝ Հայաստանի սահմանակից Կապադովկիոյ մէջ: Քրիստոնէայ զօրավարը կը քանդէ հեթանոսական մեհեանները եւ եկեղեցիներ կը կառուցէ, տարածելով քրիստոնէութիւնը:

Պարսիկ զօրավարներէն շատեր, տեսնելով Սարգիսի բարեպաշտութիւնը եւ իր աղօթքներով գործած հրաշքները, կը հրաժարին հեթանոսութենէ եւ կը դառնան քրիստոնէայ: Սակայն Պարսկաստանի Շապուհ թագաւորը իր մօտ կանչելով Սարգիսը, կը պահանջէ պաշտել կրակը: Չօրավարը կը մերժէ եւ թագաւորին դիմաց կը կործանէ կրակի բագինը: Չայրացած կրակապաշտ ամբօխը կը յարձակի Ս. Սարգիսի եւ իր զակին վրայ: Չաւակը՝ Սարտիրոսը տեղւոյն վրայ կը նահատակուի: Ս. Սարգիս կը բանտարկուի եւ անսասան մնալով իր հաւատքին մէջ՝ կը գլխատուի:

Նահատակուելէն ետք, Ս. Սարգիսի մարմինին վրայ լոյս կ'իջնէ:

Ս. Մեսրոպ Մաշտոց Ս. Սարգիսի մասունքները կը տեղափոխէ Կարբի գիւղ (Աշտարակի շրջան), ուր կը կառուցուի սուրբին անունը կրող եկեղեցի մը:

Հետագային, Ս. Սարգիսի տօնը կը ճանչցուի որպէս Երիտասարդներու օրհնութեան օր:

Ս. Սարգիսի տօնն ու պաշտամունքը մեծ ժողովրդականութիւն ունին հայ ժողովուրդին, յատկապէս՝ Երիտասարդներուն մօտ:

Ս. Սարգիսի տօնը կը յիշատակուի գլխաւորաբար ընտանեկան շրջանակի մէջ: Ան Երկուշաբթի օր՝ Առաջաւորաց պահիցն հետ կը սկսի:

Պահիցի օրերուն արգելքներ ճշդուած էին ոչ միայն ուտելիքին վրայ, այլեւ՝ աշխատանքի որոշ տեսակներու, մարմինի խնամքի եւ այլն: Այսպէս՝ այդ օրերուն արգիլուած էր լուացք ընել, ճախարակ մանել, կամ գործ ունենալ բուրդի կամ մագի հետ...

Ս. Սարգիսի տօնը խնոյքներ, խաղեր կամ այլ սոսնահանդեսներ չունէր: Միայն որոշ շրջաններու մէջ ծով պահող հարսնցուններուն փեսացուններու ընտանիքներէն տեսակաւոր անուշեղէն կը դրկուէին իբրեւ նուէր: Իսկ հարսնցուին ընկերուիները միասին կը հաւաքուէին վայելելու համար համեղ անուշեղէնը:

ՏԵԱՆՆԵՂԱՊԱԶ

Տեանընդառաջ բառը կազմուած է տեան, ընդ եւ առաջ բառերէն, որ կը նշանակէ Տիրոջ առաջ ելլել, Տերը դիմաւորել:

Տեանընդառաջը թէ՛ Քրիստոնէական եւ թէ՛ հեթանոսական տօն մըն է, որովհետեւ Քրիստոսի քառասնօրեայ տաճար ընծայման տօնն է՝ միեւնոյն ատեն հին հայոց Միհրը՝ կրակի աստուածը, որ նախաքրիստոնէական շրջանին պաշտելի էր, հրավառութեամբ կը յիշատակուի Տեանընդառաջին օրը:

Քրիստոնէական հասկացողութեամբ՝ Աստուածորդւոյն քառասնօրեայ տաճար ընծայումը եկած է հրեայ ժողովուրդին Հին Ուխտի օրէնքներէն: Իւրաքանչիւր ընտանիքի մէջ ծնած անդրանիկ տղայ զաւակը պէտք էր տաճար տանիլ Աստուծոյ նուիրելու:

Տեանընդառաջի կրակը իր հետ կը բերէ օդի բարեխառնութիւն եւ հունձքի առատութիւն: Այս մէկը շարունակութիւնն է այն հաւատքին, որ մեր նախնիքը ունէին, կրակէն սպասելով ամեն բարիք:

Մինչեւ օրս հայկական այս աւանդութիւնը կը պահպանուի: 13 Փետրուարին, Երեկոյեան ժամերգութեան ընթացքին, Տեանընդառաջի յատուկ շարականներ կ'երգուին եւ ատեն դրուած երեք մեծ աշտանակներուն մոմերը կը վառին: Ժողովուրդը իր մոմերը կը վառէ այդ աշտանակներէն ու տուն կը տանի:



Թիւ 6
ՓԵՏՐՈՒԱՐ . Բ . 2022

ԳԻՏԷ՞Ք ԹԵ ...

1. ԲԵԼԵՆԱՅԻՆ արջին մագերը սպիտակ չեն: Անոնք անգոյն են: Մագի իրաքանչիւր հաստ թել փոսիկ մը ունի, որմէ կ'արտացոլայ լոյսը՝ արջին գոյնը դարձնելով ճերմակ: Անոր թափանցիկ մորթին տակ մաշկը սեւ է, որպէսզի արեւին ջերմութիւնը ծծէ եւ արջին մորթը տաքուկ մնայ:

2. Կորիւաներու քիթի կնճիռներուն վրայ գծուած նախշը իւրայատուկ է իւրաքանչիւրին համար:

3. Չղջիկներուն ատամները շատ սուր կ'ըլլան: Անոնց թուրքը բոլոր տեսակի ցաւերը կը մեղմացնէ:

4. Գետնառիծներու (քամելիոն) լեզուին հասակը հաւասար է անոր մարմինին եւ ան կրնայ վայրկեանի մը մէջ իր որսը բռնել:

5. Առիւծին մռնչիւնը, բաղդատմամբ մեծ կատուներու մռնչիւնին հետ՝ ամենէն զօրաւորն է: Ան կրնայ լսուիլ մինչեւ 5 ք.մ. (3 մղոն) հեռաւորութեան վրայ:



Փորձէ՛ իւրաքանչիւր բառ միացնել իր հոմանիշին:

Ամոքել
Արհաւիրք
Կաշկանդել
Գոյժ
Մոլախոտ

անպիտան-խոտ
տխուր լուր
տագնապ, սարսափ
մխիթարել, սփոփել
արգիլել

Կրնա՞ս թուել երեք յաջորդական օրեր, առանց յիշելու շաբթուան օրերուն անունները:

:մնտի 19 մտոմ 'իշմզ :ղոմոտտոմ



ԱՆԱՍՈՒՆՆԵՐԸ ԻՆՉՊԷ՞Ս ԼՈՅՍ ՈՒՆԵՑԱՆ

Անասուններուն աշխարհը մութ էր եւ այդ պատճառով կը խարխափէին եւ իրարու կը զարնուէին: Ոչ մէկ անասուն գիտէր մթութեան պատճառը: Վերջապէս, անոնք որոշեցին ժողով մը գումարել, որպէսզի մթութեան հարցը լուծեն:

Ժողովը նախագահեց Բուն, որովհետեւ ան միւս կենդանիներէն աւելի լաւ կը տեսներ մթութեան մէջ: Ան ըսաւ. *«Մենք լոյսի պէտք ունինք»:*

Բոլոր անասունները բարձրաձայն երկրորդեցին. *«Ծիշո՛ղ է: Պէտք ունինք լոյսի, բայց ուրկէ պիտի ստանանք զայն»:*

Բուն ազդարարեց. *«Դիւրին չէ լոյս ունենալը: Կ'ըսուի թէ աշխարհի միւս կողմը լոյս կայ, բայց հոն հասնիլը երկար եւ վտանգաւոր ճամբորդութիւն է»:*

Բոլորը միասնաբար պոռացին. *«Ո՞ր քաջը պիտի կատարէ այդ վտանգաւոր ճամբորդութիւնը»:*

Երկար լռութիւն տիրեց: Բոլոր թռչուններն ու գազանները դողացին մթութեան մէջ: Վերջապէս մեղմ ձայն մը լսուեցաւ:

Ոպոսոն (possum) առաջարկեց. *«Ես կը փորձեմ: Ես ունիմ երկար, մազոտ պոչ մը, ուր կրնամ պահել լոյսը եւ հետս բերել զայն»:*

Ոպոսոն ճամբայ ելաւ առանձին եւ ճամբորդեց դէպի արեւելք: Օրերով ճամբորդեց սեւ աշխարհին մէջ, առանց գիտնալու, թէ ո՞ր կ'երթար կամ ո՞ր կը գտնուէր, մինչեւ որ հեռունէն սկսաւ տեսնել լոյսի շող մը երկնքին մէջ:

Ոպոսոն աճապարեց եւ ուզեց լոյսին մօտենալ, բայց երբ շատ մօտեցաւ, աչքերը ցաւեցան: Ան շլացած ձեւացնելով նայեցաւ լոյսին, որպէսզի չկուրնայ:

Երբ ոպոսոն ճամբորդեց աշխարհի միւս ծայրը, ան գտաւ արեւը եւ կտոր մը փրցուց անկէ ու զայն դրաւ իր երկար, մազոտ պոչին մէջ, ապա վերադարձաւ տուն:

Դէպի տուն ճամբորդութիւնը շատ երկար տեւեց: Արեւուն կտորը շատ տաք ըլլալով այրեց ոպոսոնին պոչիկին մազերը ու արեւը ինկաւ գետին: Այս պատճառով ալ ոպոսոնին պոչը մինչեւ օրս երկար է ու առանց մազի:

Բոլոր անասունները բարկացան երբ ոպոսոն վերադարձաւ տուն մթութեան մէջ: Անոնք ըսին. *«Ոպոսոն փորձեց եւ ձախողեցաւ: Հիմա մենք երբեք լոյս պիտի չունենանք»:*

Անգղը առաջարկեց. *«Ես կը փորձեմ: Հաւանաբար այս ճամբորդութիւնը պէտք ունի մէկու մը, որ թէւեր ունի»:*

Անգղը թռաւ դէպի արեւելք եւ հասաւ արեւուն քով: Ան իր թաթով արեւէն կտոր մը փրցուց: Ան ըսաւ. *«Ոպոսոն փորձեց իր պոչովը շալկել արեւուն կտորը, բայց չյաջողեցաւ: Ես պիտի փորձեմ գլուխովս շալկել զանիկա»:*

Անգղը արեւուն կտորը գլխուն վրայ դրաւ: Արեւը շատ տաք ըլլալով այրեց գլխուն փետուրները: Ան գլխապտոյտ ունեցաւ եւ ճամբան կորսնցուց: Դարձաւ եւ դարձաւ, մինչեւ որ արեւուն կտորը գետին ինկաւ: Այս է պատճառը, որ մինչեւ օրս անգղին գլուխը ճաղատ է ու ան միշտ կլոր-կլոր կը դառնայ բարձր երկնքին մէջ:

Երբ անգղը վերադարձաւ մթութեան մէջ, անասունները ըսին. *«Հիմա իսկապէս ճար չմնաց մեզի համար: Մեր ընկերները իրենց լաւագոյնը փորձեցին ընել, բայց չյաջողեցան»:* Անասունները ձայն մը լսեցին, նոյնիսկ չնկատեցին թէ որո՞ւ ձայնն էր:

Սարդը ըսաւ. *«Ես եմ: Հաւանաբար անգամ մը եւս պէտք է փորձենք եւ այս անգամ ես պատրաստ եմ այդ երկար ու վտանգաւոր ճամբորդութիւնը կատարելու, հակառակ որ փոքր եմ եւ դանդաղ»:* Գամբորդութիւնը սկսելէն առաջ, ան հաւաքեց քիչ մը խոնաւ կաւ եւ իր ութը փոքրիկ ձեռքերով պզտիկ աման մը շինեց:

Սարդը ըսաւ. *«Ոպոսոն եւ անգղը չունէին արեւուն կտորը շալկելու միջոց: Ես այս ամանին մէջ պիտի դնեմ արեւուն կտորը»:*

Սարդը մանեց դերձան մը, կապեց զայն ժայռի մը ու ըսաւ. *«Արեւուն զօրաւոր լոյսը ցաւցուց ոպոսոնին աչքերը եւ արեւուն տաքութեան զօրութենէն անգղը գլխապտոյտ ունեցաւ եւ կորսնցուց իր ճամբան: Մինչդէռ ես երբ տուն վերադառնամ, պիտի հետեւելով դերձանին»:*

Սարդը սկսաւ ճամբորդել դէպի արեւելք եւ միաժամանակ մանել իր դերձանը: Երբ հասաւ արեւուն մօտ, ան փրցուց արեւէն կտոր մը եւ դրաւ կաւէ ամանին մէջ: Արեւը այնքան փայլուն եւ զօրաւոր էր, որ սարդը հագիւ կը տեսներ, բայց դերձանին հետեւելով վերադարձաւ տուն:

Ան արեւելքէն վերադարձաւ փայլելով, կարծեք ինք էր արեւը: Մինչ օրս ալ, երբ սարդը կը մանէ իր ոստայնը, դերձանները կը փայլին արեւու ճառագայթի նման:

Սարդը տուն հասաւ: Անասունները առաջին անգամ ըլլալով սկսան տեսնել զիրար: Անոնք տեսան սարդին փոքրիկ ըլլալը եւ զարմացան, թէ ան ինչպէ՛ս առանձին կատարեց այդ երկար եւ վտանգաւոր ճամբորդութիւնը: Յետոյ տեսան, թէ սարդը ինչպէ՛ս շինած էր կաւէ ամանը՝ արեւը շալկելու համար:

Փոքրիկ սարդը շատ մօտեցաւ արեւուն եւ այդ պատճառով մինչեւ օրս սարդը առտու կանուխ կը մանէ իր ոստայնը՝ նախքան արեւուն բարձրանալը:

* * *

Այս պատմութենէն կը սորվինք, թէ կեանքին մէջ պէտք է միշտ մեր լաւագոյնը ընենք, նոյնիսկ եթէ մարդիկ մեր ընելիքը նախապէս փորձած եւ ձախողած են, որովհետեւ յարատեւութիւնը մեզ յառաջ կը տանի:

ՈՂՈՐԿԱՊԱՏԵԱՆՆԵՐ

Ողորկապատեանները կը կազմեն առանձին խումբ մը, որ կը բաղկանայ 30.000 տեսակէ: Այս խումբը իր մէջ կ'ընդգրկէ թէ՛ մանրակազմ եւ թէ՛ հսկայակազմ կենդանիներ, ինչպէս՝ ծովային մեծ խեցգետիններ: Այս անողնաշարներուն մեծամասնութիւնը կ'ապրի ջուրի մէջ, բայց ոմանք ալ կ'ապրին ցամաքի վրայ:

ԳԻՏԵ՞Ս ԹԵ ...

Ծովային մեծ խեցգետինը կրնայ մինչեւ 60 սանթիմէթր երկայնք ունենալ: Այս անողնայարը կրնայ ապրիլ մինչեւ 50 տարի, եթէ որսորդի մը ձեռքը չ'անցնի: Երբ ողջ է, կ'ունենայ թուխ-կապուտիկ կամ թուխ-կանաչ գոյն, բայց երբ մեր տուները հասնի՝ կարմիր գոյն կը ստանայ:

Այս կենդանիները ընդհանրապէս ունին յօդաւոր պատեան մը եւ տասը տոտիկներ, որոնց առաջին զոյգը փոխակերպուած են ճանկերու: Անոնք իրենց ճանկերը կը գործածեն ինքնապաշտպանութեան համար: Ամենէն ծանօթներն են՝ խեցգետինը, կարիդոսը եւ խեչափառը:

Ճափոնի մէջ գտնուող ծովային հսկայ սարդը մեծագոյնն է ողորկապատեաններու ընտանիքին մէջ: Անոր պատեանը կրնայ ունենալ մինչեւ 30 սանթիմէթր տրամագիծ, իսկ ոտքերը՝ 1,20 մէթր երկայնք:

Կարիդոսը մոխրագոյն կամ վարդագոյն կրնայ ըլլալ: Ունի անմիջական շրջապատին գոյնը ստանալու կարողութիւն:

Խեչափառները օժտուած են երկար տոտիկներով, որոնք զիրենք կարող կը դարձնեն քալելու ջուրին տակ եւ երբեմն ալ մխրճուելու աւազին մէջ:

